

ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՂՈՂԻ

«Պատուեա՛ զՏէր ի քոյոց արդար վաստակոց»:
(Առակք Գ 9)

ԱՆՁՆ ՈՒ ՏԵՂԸ

Վերափոխումը գլխավորն է Ս. Աստվածածնի յոթը տոներեն: Յոթն ալ տերունի: Տաղավար է: Աստվածածնին խաղողի օրհնություն կկատարվի: Ուրեմն բացատրենք Աստվածածնի և խաղողօրհնենքին կապը:

Պատուեա զՏէր ի քոյոց արդար վաստակոց կպատվիրե Իմաստունը:

Աստվածածինը կօրհնվի ավելի քան որևէ սուրբ, մանավանդ Վերափոխման տոնին:

Ս. Աստվածածնին անունով ամեն տեղ կանգնած են եկեղեցի և տաճար: Անոր անունը կկրեն անհամար հաստատություններ՝ վանք, անապատ, կուսանոց, որբանոց, ծերանոց, հիվանդանոց, դարմանատուն, վարժարան և դպրանոց: Կանանց համար ամենեն շատ սիրված և տարածված անուններեն մեկը Մարիամ է:

Հավատացյալները սովորաբար Աստվածածնի անունով մատաղ կկտրեն, ողորմություն կբաշխեն, մոմ կվառեն, բարիք կգործեն, աղոթք և ուխտ կընեն:

Այս ամենը անոր համար՝ որ ինչպես եկեղեցին կհոչակե՝ Աստվածածինը գերազանց արարած մըն է. վեր, բարձր բոլոր սուրբերեն, վար և խոնարհ միայն Ամենասուրբ Երրորդութենեն:

Ուստի ան իբր սոսկական սուրբ չէ որ կտոնվի, այլ իբր **Աստվածամայր՝** մայրը Հիսուսի Քրիստոսի, Աստվածածին:

Աստվածածինը հզոր միջնորդ մըն է մեղքե սրբվելու և ազատ մնալու, կյանքի դժվարություններ լուծելու, առօրյա վիշտեր ու տառապանքներ մեղմելու, բաղձացված շնորհքի մը արժանանալու:

Ուստի հավատացյալներն Աստվածածնի բարեխոսության կապավինին, անոր պաշտպանությունը կխնդրեն իբրև գթության մայր, սրբության տաճար, հաջողության դուռ և ճամբա:

Աստվածածինը կգերազանցե բոլոր կիներն, բոլոր մայրերը, ուստի իրավամբ կհանդիսանա

—Հրեշտակ ի մարդկանէ,
Մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի[1]...
Մարգարտատեսիլ և ծիրանազգեաց հրաշափառագոյն կոյս[2],

[1] Նարեկ, բան 2:
[2] Շարական:

Կոյս և մայր, մայր և կոյս,
Աղախին Քրիստոսի և բարեխօս
աշխարհի՝:

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

Երբ անձ մը Աստուծո և մարդոց աչքին կոժտվի այս կարգի շնորհներով դժվար է որ սովորական վախճան մը ունենա:

Սակն՝ եկեղեցվո մեջ ծագումը Վերափոխման ավանդության մասնավորաբար Ե դարեն հետո, **Աստվածածին** և **Աստվածամայր** կոչումներուն հաստատությամբն Եփեսոսի Ս. Ժողովին (431) մեջ:

Ըստ Շարականի, երբ Տիրամայրը կենչ մահվան քունով, առաքյալներն ու յուղաբեր կիները՝ հավատացյալներու բազմության հետ՝ վառված ջահերով և անուշաբույր խնկեղեններով կհավաքվին անոր գերեզմանին դուռը՝ Գեթսեմանի: Ամենքը միասին սաղմոսով և օրհներգությամբ, աղոթքով և արցունքով կհայտնեն իրենց սերն ու հարգանքը: Ահա այդ միջոցին կթվի թե արարիչն Աստված հրեշտեններու բազմությամբ կերևի Տիրամոր գերեզմանին վրա: Եվ Ս. Կույսը ամպեղեն կառքով կսլանա վերը օդին մեջ, կհամբառնա երկինքը, կմտնե յոթնաստեղյան խորանը, շրջապատված իմաստուն կույսերով, վեցթևյան սերովբեներով և բերովբեներով:

Ավանդաբար հասած ան երկինքի մեջ միառակից կլինի Աստվածորդույն[4]:

Տիրամոր այս երանական վախճանն է որ կկոչվի և կտոնվի **Վերափոխումն Ս. Աստվածածնի** անունով:

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՂՈՂԻ

Աստվածածնի տոնին կկատարվի ավանդական օրհնությունը խաղողի: Կարգը տեղին է:

Զի ամենայն տուրք բարիք, և ամենայն պարգևք կատարեալք ի վերուստ են իջեալք՝:

Աստուծո տված բարիքներն անհամար են և պարգևները բազում: Մարդիկ կվայելեն զանոնք. ուստի իբր նշանակ փոխադարձ սիրո և երախտագիտության, սովորաբար իրենց վաստակին առաջին բերքը, երախայրիքը, պտուղ, արմտիք, կենդանի, դրամ, զավակ իբր ընծա և պատարագ կմատուցանեն Աստուծո:

Աբելին ընտրյալ զոհը հաճո եղավ Աստուծո:

Նույնպես եղան հայր Աբրահամին՝ Իսահակ որդին. Հովակիմին և Աննայինը՝ միամոր դուստրը Մարիամ, որ տաճարին մեջ տաճարացավ: Եվ Աստված՝ հանձին Հիսուս Որդիին՝ անոր մեջ տաղավարեցավ անճառելի անարատ հղությամբ: Ս. Կույսը եղավ Աստվածածին, Աստվածամայր, Տիրամայր:

Ս. Մարիամին Աստուծո մոտ գտած շնորհքովը օրհնության կխոսվին մեղքի հետևանքով մարդոց տրված անեծքն ու դատապարտությունը:

Ուստի մենք, մեր գտած շնորհներուն և վայելած բարիքներուն փոխարեն կմղվինք արտահայտելու մեր սերն ու երախտագիտությունը: Աստուծո կնվիրենք մեր վաստակին երախայրիքը՝ երկրի բերքին լավագույններեն խաղող և ցորեն:

Երջանիկ պարագա է որ Աստվածածնի տոնն ու խաղողի հասունացը կզուգադիպին իրարու, հունձքի և կութքի եղանակին:

Աստվածածինը մարդոց ծնունդներեն Աստուծո ընծայված նվերներեն ամենեն գեղեցիկն է ու երևելին:

Աստուծո համար նույնպես դյուրեկան են երկրի բերքերեն ցորենն ու խաղողը, հացը և գինին սուրբ պատարագի: Ուստի վերջին ընթրիքին մեր Տերը հացն ու գինին կնվիրագործե օրհնությամբ և կուտա իր աշակերտներուն, իբր նշանակ իր փրկական մարմնին և արյունին:

Առէ՛ք, կերա՛յք, այս է մարմին իմ...
Արբէ՛ք ի դմանէ ամենեքին. զի այդ է
արիւն իմ[5]:

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻՔ

Շարականը այլաբանական գեղեցիկ պատկերներով կբնորոշե Աստվածածնի տեղը, դիրքը և դերը: Հատկանշական են անոր ստորոգելիները:

Աստվածածինը կկոչվի **«Անթառամ ծաղիկ, անդատապարտ շառավիղ, բանաւոր բարուկակ, կեանքի ծառ»:**

Իսկ Աստվածածնի բերքը Հիսուս Որդին կորակվի **«Համեղաճաշակ պտուղ, անսպառ ողկոյզ»:**

Ահա բնագիրը ճաշու շարականեն.

Անթառամ ծաղիկ, անդատապարտ
շառաւիղ,
Վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ.
Եօթնարփեան շնորհաց հոգւոյն
ընդունարան.
Աստուածածին և կոյս:

[3] Շարական:
[4] Անդ. Կանոն Վերափոխման Ս. Աստուածածնի:
[5] Խորհրդատետր Սուրբ Պատարագի:
[6] Մտթ. ԻՁ 26:

Համեղաճաշակ պտղոյն բանաւոր
բարունակ,
Յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անբսպառ՝
Յուրախութիւն տրրտմեցելոցն՝
Ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան[7]:

Ակներև են և իրաւ վերև կատարված նմանությունները:

Աստվածածինն է բանավոր բարունակը որթատունկի և ծառը կյանքի, Հիսուս Որդին է իր բերած անսպառ որկույզը խաղողի:

Ուստի շատ տեղին է և պատշաճ որ, բերքի հասունության այս շրջանին երբ կկատարվի Աստվածածնի Վերափոխման տոնը, լինի նաև խաղողօրհնենքը իբր նշանակ Աստուծո հանդեպ մեր սիրույն և վայելած հոգևոր ու նյութական բարիքներուն:

Տիրամայրը Աստուծո ընծայված նվերներուն ամենեն ընտիրն է և ամենեն հաճելին:

Ըստ Շարականին ան իր սրբակյաց նվիրումով կհանդիսանա **«Գերագոյն Էին աթոռ»**, **«Ծառ կենաց անմահական պտղոյն»**, **«տապանակ կտակի բանին»**, **«սափոր ոսկի երկնային մանանային»**[8]:

Ս. Կույսին տրված այս և նման ստորոգելիները և անոր խաղողի բարունակին հանգիտությունը աբանչելի այլաբանությամբ կպատկերացնեն անոր դերն ու դեմքը փրկագործության տնօրինական ընթացքին մեջ:

Ուրեմն եկեք առաքյալներու, յուղաբեր կիներու, Աբելի, Աբրահամի, Հովակիմի և Աննայի սրտաբուխ նվիրաբերությամբ և հավատքով փառաբանենք զԱստված, աղբյուրը մեր վայելած բոլոր շնորհներուն:

Մայր սուրբ աբանչելի լուսոյն...
Աղաչեա վասն մեր զառ ի քէն
զմարմնացեալն Աստուած
Աճեցուցանել յերկրի մերում զբաղցր
բոլխումն աղբերաց,
Զառատ պտղաբերութիւն բուսոց և տնկոց,
Առ ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր
պիտոյից մերոց:
Ամէն: Լուր Տէր և ողորմեա[9]:

---

[7] Շարական:

[8] Անդ:

[9] Ժամագիրք: